

Տեղեկագիրը հիմնադրվել է 2022թ. ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման  
ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի

Գիտական խորհրդի որոշման համաձայն

Бюллетень основан в 2022г. по решению Ученого совета

ГНО « Национальный центр по контролю  
и профилактике заболеваний» МЗ

Bulletin was founded in 2022 by the decision of the Scientific Council of the National Center of  
Disease Control and Prevention SNCO, MOH

Գլխավոր խմբագիր՝ Բ.Գ.Դ., պրոֆեսոր Մելիք-Անդրեասյան Գ.  
Խմբագրական խորհուրդ՝ Աբովյան Ռ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս  
Ալեքսանյան Յու., Բ.Գ.Թ. Ավետիսյան Լ., Բակունց Ն., Գրիգորյան Ս.,  
Սահակյան Գ., Բ.Գ.Թ. Վանյան Ա.

Քարտուղարություն՝ Զաքարյան Ս., Հովհաննիսյան Մ.

Главный редактор д.м.н. профессор Мелик-Андреасян Г.

Редакционный совет: Абовян Р., к.м.н. Аветисян Л.,  
академик НАН РА Алексанян Ю., Бакунц Н.,  
к.м.н.Ванян А., Григорян С., Саакян Г.

Секретариат: Закарян С., Оганесян М.

Editor-in-Chief DSc., Professor Melik-Andreasyan G.

Editorial Board: Abovyan R., academician NAS RA Aleksanyan Yu.,  
PhD Avetisyan L., Bakunts N., Grigoryan S.,  
Sahakyan G., PhD Vanyan A.

Secretariat: Hovhannisyan M., Zakaryan S.

ԱՄՍԱԿԱՆ ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ  
MONTHLY EPIDEMIOLOGICAL BULLETIN  
ЕЖЕМЕСЯЧНЫЙ ЭПИДЕМИОЛОГИЧЕСКИЙ БЮЛЛЕТЕНЬ

**COVID-19-ՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ  
ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ:**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԵՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ  
ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻՆ**

**COVID-19 EPIDEMIOLOGICAL SITUATION IN THE  
REPUBLIC OF ARMENIA.  
THE RESPONSE OF ARMENIA TO NEW HEALTH  
CHALLENGES**

**ЭПИДЕМИОЛОГИЧЕСКАЯ ОБСТАНОВКА ПО  
КОРОНАВИРУСНОЙ БОЛЕЗНИ (COVID-19) В  
РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ.**

**РЕАГИРОВАНИЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ НА НОВЫЕ  
ВЫЗОВЫ СИСТЕМЕ ЗДРАВООХРАНЕНИЯ**

**ՀՈՒՆԻՍ 2022**

**JUNE 2022**

**ИЮНЬ 2022**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## CONTENTS

## СОДЕРЖАНИЕ

- ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀՀ-ՈՒՄ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ
- ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ (COVID-19) ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊՇՌ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿՐԿՆԱԿԻ ԴՐԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՎ ԴԵՊՔԵՐԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ
- ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ
- ԿՈՐԱՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ
- ԿԱՊԻԿԻ ԾԱՂԻԿԸ ՈՐՊԵՍ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ
- ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԵՊԱՏԻՏՆԵՐ. ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
- ԶՐԾԱՂԿԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

- COVID-19 SITUATION IN THE REPUBLIC OF ARMENIA AS OF JUNE 6
- EPIDEMIOLOGICAL CONTROL OF CASES WITH PCR DOUBLE POSITIVE RESULTS FOR COVID-19 IN RA
- COVID-19 VACCINATION IN REPUBLIC OF ARMENIA: STATISTICAL DATA
- COVID-19 VACCINATION EFFECTIVENESS
- MONKEYPOX AS A NEW GLOBAL HEALTH CHALLENGE. RA RESPONSE
- VIRAL HEPATITISES: SITUATION IN THE REPUBLIC OF ARMENIA
- CHICKENPOX SITUATION IN THE REPUBLIC OF ARMENIA

- ЭПИДЕМИОЛОГИЧЕСКАЯ ОБСТАНОВКА ПО КОРОНАВИРУСНОЙ БОЛЕЗНИ (COVID-19) В АРМЕНИИ НА 6 ИЮНЯ
- ЭПИДНАДЗОР ЗА ПОВТОРНЫМИ СЛУЧАЯМИ ПОЛОЖИТЕЛЬНЫХ РЕЗУЛЬТАТОВ ПЦР-ИССЛЕДОВАНИЯ В ОТНОШЕНИИ КОРОНАВИРУСНОЙ ИНФЕКЦИИ (COVID-19) В АРМЕНИИ
- ВАКЦИНАЦИЯ ПРОТИВ КОРОНАВИРУСНОЙ БОЛЕЗНИ (COVID-19) В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ ПО СОСТОЯНИЮ НА 6 ИЮНЯ 2022 ГОДА: СТАТИСТИЧЕСКИЕ ДАННЫЕ
- ЭФФЕКТИВНОСТЬ ВАКЦИНАЦИИ ПРОТИВ COVID-19
- ОСПА ОБЕЗЬЯН КАК НОВЫЙ ВЫЗОВ ОБЩЕСТВЕННОМУ ЗДРАВООХРАНЕНИЮ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ
- ВИРУСНЫЕ ГЕПАТИТЫ: СИТУАЦИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ
- ВЕТРЯНКА: ЭПИДЕМИОЛОГИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

**ՀՈՒՆԻՍ 2022**

**JUNE 2022**

**ИЮНЬ 2022**

## ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀՀ-ՈՒՄ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ


Աշխարհում COVID-19-ով պայմանավորված համաճարակային իրավիճակը ներկայումս հարաբերական կայուն է: Հունիսի 6-ի դրությամբ (11:32pm CEST) աշխարհում արձանագրվել է հիվանդության 535,506,558 հաստատված դեպք, որից նոր դեպքերը՝ 298862, իսկ մահվան ելքով դեպքերը՝ 6,320,616 (1.2%):<sup>1</sup> Դեպքերն արձանագրվել են 223 երկրում, իսկ առավել բարձր հիվանդացություն արձանագրող երկրների ցանկում են ԱՄՆ-ն, Հնդկաստանը, Բրազիլիան, Ռուսաստանի Դաշնությունը, Ֆրանսիան, Միացյալ Թագավորությունը, Թուրքիան, Արգենտինան, Կոլումբիան, Իսպանիան, Իտալիան, Իրանը և այլն:<sup>2</sup>

Վերջին շաբաթվա ընթացքում առավել շատ դեպքեր գրանցվել են հետևյալ երկրներում՝ ԱՄՆ, Իրան, Հնդկաստան, Բրազիլիա, Ինդոնեզիա, Միացյալ Թագավորություն, Թուրքիա, Ռուսաստանի Դաշնություն, Ֆրանսիա, Թայլանդ, Մալազիա, Մեքսիկա, Իրան և այլն:

### Situation by WHO Region

Europe	221 373 828	confirmed
Americas	157 725 452	confirmed
Western Pacific	60 771 271	confirmed
South-East Asia	58 157 405	confirmed
Eastern Mediterranean	21 780 549	confirmed
Africa	9 007 048	confirmed

Source: World Health Organization  
Data may be incomplete for the current day or week.



Գծապատկեր 1. Դեպքերի համամասնությունն՝ ըստ ԱՀԿ տարածաշրջանների

2022 թվականի հունիսի 6-ի դրությամբ ՀՀ-ում արձանագրվել է 423006 դեպք (հ.գ. ըստ 100.000 բն.՝ 14295.7), որից՝ 67-ը (0.01%) ստանում է բուժում, 412661 (97.5%) անձ առողջացել է, 8629 դեպքում (հ.գ. ըստ 100.000 բն.՝ 291.5) արձանագրվել է մահվան ելք, մահաբերությունը կազմում է 2%:

Վերջին 14 օրվա ընթացքում արձանագրվել է հիվանդության 67 դեպք (հ.գ. 2.3 դեպք ըստ 100.000 բնակչության), ինչը նախորդ նույն ժամանակահատվածի համեմատ (43 դեպք, հ.գ. 1.5 դեպք ըստ 100.000 բնակչության) աճել է 56%-ով:

Թեստավորման դրական արդյունքների մասնաբաժինը վերջին 14 օրվա ընթացքում կազմել է 0.3%, այնինչ նախորդ 14-օրյակում՝ 0.2%:

Վերջին 7 օրվա ընթացքում արձանագրվել է հիվանդության 43 դեպք, ինչը նախորդ նույն ժամանակահատվածի համեմատ (24 դեպք) աճել է 79%-ով:

Թեստավորման դրական արդյունքների մասնաբաժինը վերջին 7 օրվա ընթացքում կազմել է 0.4%, այնինչ նախորդ շաբաթ՝ 0.2%:

1 <https://covid19.who.int/>

2 <https://www.who.int/emergencies/diseases/novel-coronavirus-2019>




ԱՂՅՈՒՍԱԿ 1. COVID-19-ի դեպքերը՝ ըստ սեռատարիքային խմբերի

Տարիքային խումբ	դեպքերի թիվ		դեպքերի թիվ	
	5/9/2022 - 5/22/2022		5/23/2022 - 6/5/2022	
	արական	իգական	արական	իգական
18-29	7	2	5	12
30-59	15	17	23	27
60+	0	0	0	0
Ընդհանուր	22	19	28	39
	41		67	

ԱՂՅՈՒՍԱԿ 2. COVID-19-ի դեպքերը՝ ըստ մարզերի


Մարզ	նախորդ 14 օր		վերջին 14 օր	
	5/9/2022 - 5/22/2022		5/23/2022 - 6/5/2022	
	Դրական դեպքերի թիվ	Հարաբերական ցուցանիշ՝ ըստ 100.000 բն.	Դրական դեպքերի թիվ	Հարաբերական ցուցանիշ՝ ըստ 100.000 բն.
Արագածոտն	3	2.4	0	0.0
Արարատ	4	1.6	9	3.5
Արմավիր	1	0.4	3	1.1
Գեղարքունիք	3	1.3	1	0.4
Երևան	27	2.5	41	3.8
Լոռի	1	0.5	4	1.8
Կոտայք	2	0.8	4	1.6
Շիրակ	1	0.4	3	1.3
Սյունիք	0	0.0	3	2.2
Վայոց Ձոր	0	0.0	0	0.0
Տավուշ	1	0.8	2	1.6
ՀՀ	43	1.5	67	2.3



Քարտեզ 1. COVID-19-ի հիվանդացության ցուցանիշն ըստ մարզերի, 23.05-05.06.2022թթ. ժամանակահատվածի համար

Վերջին 14 օրվա ընթացքում արձանագրվել է հիվանդության 2.3 դեպք ըստ 100.000 բնակչության, իսկ թեստերի դրական արդյունքների մասնաբաժինը վերջին 14 օրվա ընթացքում կազմել է 0.3%, ինչն ըստ Եվրամիության չափանիշների համարվում է «կանաչ գոտի»:<sup>3</sup> 2 շաբաթ առաջ վերը նշված ցուցանիշները համապատասխանաբար եղել են 1.5 դեպք ըստ 100.000 բնակչության և թեստերի դրական արդյունքների մասնաբաժինը 0.2%:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 2. Ռիսկի գոտիները՝ ըստ Եվրամիության չափանիշների



### ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ (COVID-19) ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

3 <https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2021/06/14/covid-19-council-updates-recommendation-on-free-movement-restrictions/>



## ՊՇՌ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿՐԿՆԱԿԻ ԴՐԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՎ ԴԵՊԲԵՐԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ


Նոր կորոնավիրուսային համավարակը (COVID-19) 21-րդ դարի ամենախոշոր մարտահրավերներից է: Այն արդեն իսկ ախտահարել է 530 մլն մարդ և դարձել ավելի քան 6.3 մլն մարդու մահվան պատճառ: Հաշվի առնելով վարակի հարուցչի փոփոխականությունը՝ Հայաստանի Հանրապետությունում իրականացվել է արձանագրված կորոնավիրուսային հիվանդության ՊՇՌ թեստավորման կրկնակի դրական դեպքերի համաճարակաբանական հետազոտություն:

«ԱՐՄԵԴ» էլեկտրոնային համակարգից ելքագրվել են բոլոր այն անձանց տվյալները, ում մոտ 2 և ավել անգամ ՊՇՌ մեթոդով հայտնաբերվել է COVID-19: Ցուցակից բացառվել են այն անձինք, ում մոտ 2 դրական արդյունքների միջև ընկած ժամանակը կազմել է 90-ից պակաս օր: 2022 թվականի հունիսի 1-ի դրությամբ Հայաստանում արձանագրվել է նմանատիպ 19347 դեպք:

Դեպքերի մեծամասնությունը կազմել են կանայք (11816 անձ, 61.1%): Միջին տարիքը կազմել է 45.24±0.11 տարեկան: Կրկնակի դրական արդյունքի դեպքերը հիմնականում արձանագրվել են 20-69 տարեկան անձանց, հատկապես՝ 30-39 տարեկանների շրջանում:

Ընդհանուր 19347 դեպքից 19049 դեպքում արձանագրվել է կրկնավարակ, 296 դեպքում՝ եռավարակ, 2 դեպքում՝ քառավարակ:

Գծապատկեր 3. Առաջին նախադեպի արձանագրման ժամանակահատվածը



Գծապատկեր 3-ից երևում է, որ հիվանդացածների մեծամասնությունը կազմում են առաջին երեք ավիքների ժամանակ հիվանդացած անձինք, ինչը պայմանավորված է շտամի փոփոխմամբ:

### ԿՐՐՈՆԱՎԻՐՈՒՄԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

2022 թվականի հունիսի 6-ի դրությամբ ամբողջ աշխարհում իրականացվել է ավելի քան 11.83 մլրդ դեղաչափ պատվաստում: Ամբողջ աշխարհի բնակչության մոտ 65.7%-ը ստացել է կորոնավիրուսային հիվանդության դեմ պատվաստում: Օրական կատարվում է 5.52 մլն դեղաչափ պատվաստում ամբողջ աշխարհում: COVID-19-ի դեմ ամբողջական պատվաստումներում բնակչության շրջանում առավել բարձր ընդգրկվածություն գրանցվել է Արաբական Միացյալ Էմիրություններում՝ 97.11%, Սինգապուրում՝ 91.50%, Չիլիում՝ 91.28%, Կուբայում՝ 88.06%:<sup>4</sup>


2022 թվականի հունիսի 6-ի դրությամբ կատարվել է 2204539 պատվաստում: Առաջին

4 <https://ourworldindata.org/covid-vaccinations?country>




դեղաչափ՝ 1135623 պատվաստում, որից 219946 դեղաչափ՝ «ԱստրաՉենեկա», 49742 դեղաչափ՝ «Կորոնավակ», 173710 դեղաչափ՝ «Սպուտնիկ-Վի», 486196 դեղաչափ՝ «Սինոֆարմ», 183490 դեղաչափ «Մոդերնա», 310 դեղաչափ՝ «Կովիշիլդ», 6761 դեղաչափ՝ «Սպուտնիկ Լայթ», 15457 դեղաչափ՝ «Պֆայզեր», 11 դեղաչափ՝ «Յանսեն»: Երկրորդ դեղաչափ կատարվել է 1012939 պատվաստում, այդ թվում՝ «ԱստրաՉենեկա»՝ 189389, «Կորոնավակ»՝ 47052, «Սպուտնիկ-Վի»՝ 163535, «Սինոֆարմ»՝ 437261, «Մոդերնա»՝ 161592, «Կովիշիլդ»՝ 125, «Պֆայզեր»՝ 13985: Բուստեր դեղաչափ՝ 55977 պատվաստում, այդ թվում՝ «ԱստրաՉենեկա»՝ 6729, «Կորոնավակ»՝ 464, «Սպուտնիկ-Վի»՝ 1608, «Սինոֆարմ»՝ 4719, «Մոդերնա»՝ 20848, «Կովիշիլդ»՝ 0, «Սպուտնիկ Լայթ»՝ 7304, «Պֆայզեր»՝ 14305:

Գծապատկեր 4. COVID-19-ի դեմ պատվաստումներ՝ ըստ դեղաչափերի 06.06.2022թ. դրությամբ



Գծապատկեր 5. COVID-19-ի դեմ պատվաստումներ՝ ըստ առանձին պատվաստանյութերի 06.06.2022թ. դրությամբ



Հանրապետությունում COVID-19-ի դեմ 1-ին դեղաչափ պատվաստումների կատարողականի ցուցանիշը՝ ըստ 18 տ. և բարձր տարիքի բնակչության թվաքանակի, տատանվում է 38.3%-ից 57.4%-ի սահմաններում, միջին հանրապետական ցուցանիշը կազմում է 50.3%: Առավել ցածր ցուցանիշ գրանցվել է Տավուշի մարզում՝ 38.3%, Սյունիքի մարզում՝ 42.1%:






Առավել բարձր ցուցանիշ գրանցվել է Արարատի մարզում՝ 57.4%, Արագածոտնի մարզում՝ 54.7% և քաղաք Երևանում՝ 53.7%:

ԱՂՅՈՒՍԱԿ 3. Պատվաստումներում ընդգրկվածության ցուցանիշներ՝ ըստ մարզերի և Երևան քաղաքի, 06.06.2022

Մարզ/ք. Երևան	1-ին դեղաչափ, % /18 տ. և բարձր բնակչության թվից /	2-րդ դեղաչափ, % /18 տ. և բարձր բնակչության թվից /	Բուստեր դեղաչափ, %, /18 տ. և բարձր բնակչության թվից /	1-ին դեղաչափ, % /ընդհանուր բնակչության թվից /	2-րդ դեղաչափ, % /ընդհանուր բնակչության թվից /	Բուստեր դեղաչափ, %, /ընդհանուր բնակչության թվից /
Արագածոտն	54.7	47.5	2.9	40.9	35.5	2.2
Արարատ	57.4	52.6	4.2	43.3	39.6	3.2
Արմավիր	49.2	44.9	2.7	37.6	34.3	2.1
Գեղարքունիք	47.5	41.3	1.8	35.9	31.3	1.4
Լոռի	45.6	41.4	2.0	34.1	31.0	1.5
Կոտայք	49.3	45.3	2.0	36.9	33.9	1.5
Շիրակ	45.0	40.2	2.2	33.8	30.2	1.7
Սյունիք	42.1	36.1	1.0	33.2	28.5	0.8
Վայոց ձոր	49.0	44.3	1.2	37.9	34.2	0.9
Տավուշ	38.3	34.5	1.2	29.4	26.5	0.9
Երևան	53.7	47.4	2.8	41.3	36.4	2.1
ՀՀ	50.3	44.9	2.5	38.3	34.2	1.9


COVID-19-ի դեմ պատվաստումներում ընդգրկվածությունը ըստ սեռի չունի հստակ համաճարակաբանական օրինաչափություն և պատկերը հետևյալն է՝ COVID-ի դեմ պատվաստումների առաջին դեղաչափ պատվաստումներում տղամարդկանց ընդգրկվածությունը 58.1% է, կանանց ընդգրկվածությունը՝ 42.9%, երկրորդ դեղաչափ պատվաստումներում տղամարդկանց ընդգրկվածությունը 52.9%, կանանց ընդգրկվածությունը՝ 37.9%, բուստեր դեղաչափ պատվաստումներում տղամարդկանց ընդգրկվածությունը՝ 2.9%, կանանց ընդգրկվածությունը՝ 2.2 %:



Գծապատկեր 6. COVID-19-ի դեմ պատվաստումներում ընդգրկվածությունն ըստ սեռի



COVID-19-ի դեմ պատվաստումներում ընդգրկվածությունն ըստ տարիքային խմբերի ունի հետևյալ պատկերը՝ ընդգրկվածությունն առավել ցածր է 65 տարեկան և բարձր տարիքային խմբում, մասնավորապես՝ առաջին դեղաչափի պատվաստումներում ընդգրկվածությունը 43.4% է, երկրորդ դեղաչափի պատվաստումներում ընդգրկվածությունը՝ 40.0%, բուստեր դեղաչափի պատվաստումներում ընդգրկվածությունը՝ 3.0%:






Գծապատկեր 7. COVID-19-ի դեմ պատվաստումներում ընդգրկվածությունն ըստ տարիքային խմբերի




## COVID-19-ի դեմ պատվաստումներում ընդգրկվածությունը՝ ըստ սեռի և տարիքային խմբերի



Կանայք



Տղամարդիկ



	12-17 տարեկան	18-34 տարեկան	35-64 տարեկան	65+ տարեկան
	1.4%	46.5%	53.6%	43.4%
	1.1%	40%	48.9%	40%
	0%	1.9%	2.6%	3%

06. 06. 2022



Առողջապահության  
Նախարարություն  
Ministry of Health of the Republic of Armenia

65 տարեկան և բարձր տարիքի բնակչության շրջանում COVID-19-ի դեմ 2-րդ դեղաչափ պատվաստումներում ընդգրկվածության առավել ցածր ցուցանիշ գրանցվել է Սյունիքի մարզում՝ 28.5%, Տավուշի մարզում՝ 32.3%, Շիրակի մարզում՝ 39.3%: Առավել բարձր ցուցանիշ գրանցվել է Արմավիրի մարզում՝ 50.3%, Արագածոտնի մարզում՝ 50.0%, Արարատի մարզում՝ 48.4%:



ԱՂՅՈՒՍԱԿ 3. COVID-19-ի դեմ պատվաստումներում ընդգրկվածությունը 65տ. և բարձր տարիքի բնակչության շրջանում

Մարզ/ք.Երևան	65տ և բարձր բնակչության թիվ	1-ին դեղաչափ	%	2-րդ դեղաչափ	%	Բուստեր	%
Արագածոտն	12766	7447	58.3	6388	50.0	512	4.0
Արարատ	27039	14342	53.0	13084	48.4	1528	5.7
Արմավիր	26414	14422	54.6	13277	50.3	1052	4.0
Գեղարքունիք	22804	11649	51.1	10314	45.2	573	2.5
Լոռի	27995	10554	37.7	9812	35.0	607	2.2
Կոտայք	26512	12259	46.2	11380	42.9	696	2.6
Շիրակ	26656	11365	42.6	10474	39.3	846	3.2
Սյունիք	18549	6050	32.6	5285	28.5	217	1.2
Վայոց ձոր	6181	2679	43.3	2498	40.4	105	1.7
Տավուշ	17192	6140	35.7	5548	32.3	218	1.3
Երևան	160827	65031	40.4	61086	38.0	4993	3.1
<b>ՀՀ</b>	<b>372935</b>	<b>161938</b>	<b>43.4</b>	<b>149146</b>	<b>40.0</b>	<b>11347</b>	<b>3.0</b>

\*Դեղին գույնով ընդգծված են ցածր ընդգրկվածության ցուցանիշները:

**ԿՈՐԱՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ**


Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ընդհանուր հաստատված դեպքերի շրջանում պատվաստված անձանց համամասնությունը՝ ըստ դեղաչափերի հետևյալն է.

2022 թվականի հունիսի 6-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ընդհանուր հաստատված 423006 դեպքից 1 դեղաչափ պատվաստված է 15438 անձ, որը կազմում է 3.6 %, 2 դեղաչափ պատվաստված է 36586 անձ, որը կազմում է 8.6%, 2 դեղաչափ պատվաստումից 14 օր հետո՝ 34418 անձ, որը կազմում է 8.1%, բուստեր դեղաչափով պատվաստված է 429 անձ, որը կազմում է 0.1%:

Ստորև ներկայացվում է պատվաստումից հետո գրանցված COVID-19 դեպքերի համամասնությունն՝ ըստ առանձին պատվաստանյութերի.



2 դեղաչափ պատվաստումից 14 օր հետո անձանցից 8.1%-ի մոտ պատվաստումից հետո գրանցվել է կորոնավիրուսային հիվանդություն (COVID-19):



ԳԾԱՊՍԿԵՐ 8. 2 դեղաչափ պատվաստումից 14 օր հետո գրանցված COVID-19 դեպքերի թիվն՝ ըստ առանձին պատվաստանյութերի, 06.06.2022թ. դրությամբ

Աղյուսակ 4. COVID-19-ի դեմ ամբողջական պատվաստված անձանց հոսպիտալացման հաճախականությունը

COVID-19-ի դեմ ամբողջական պատվաստված անձանց հոսպիտալացման հաճախականությունը	
Հոսպիտալացում %	0.18
Վերակենդանացման բաժանմունքներում հոսպիտալացում %	0.02

ՀՀ-ում 06.06.2022թ. դրությամբ երկու դեղաչափ պատվաստված անձանցից հոսպիտալացվել է 1870 անձ (0.18%), այդ թվում՝ վերակենդանացման բաժանմունքում գտնվողներից 191 անձ (0.02%):



**«ԿԱՊԻԿԻ ԾԱՂԻԿ» ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ**

2022 թվականի մայիսի 7-ից սկսած ոչ էնդեմիկ երկրներում արձանագրվել են «Կապիկի ծաղիկ» հիվանդության դեպքեր: Համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) տվյալների՝ հունիսի 13-ի դրությամբ արձանագրվել է հիվանդության 1576 դեպք, ևս 44 կասկածելի դեպք հետազոտվում է: Հիվանդության դեպքերը հաստատվել են 34 ոչ էնդեմիկ երկրում (Մեծ Բրիտանիա, Իսպանիա, Պորտուգալիա, Գերմանիա, Բելգիա, Ֆրանսիա, Նիդեռլանդներ, Իտալիա, Շվեդիա, ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա, Դանիա, Շվեյցարիա, Իսրայել, Ավստրիա, Ֆինլանդիա, Չեխիա, Սլովենիա, Արաբական Միացյալ Էմիրություններ, Իռլանդիա, Գանա, Իսլանդիա, Արգենտինա, Նորվեգիա, Լատվիա, Հունգարիա, Լեհաստան, Հունաստան, Մարոկկո, Մեքսիկա, Մալթա, Զիբրալթար, Բրազիլիա):


Հիվանդների մոտ հայտնաբերվել է կապիկի ծաղիկի Արևմտյան Աֆրիկայի շճախումբը, որի՝ մինչ այժմ արձանագրված մահաբերությունը, 1% է: Հիվանդների մոտ մահվան դեպքեր չեն արձանագրվել:

Հիվանդությունը նախկինում արձանագրվել է Աֆրիկյան երկրներ այցելելուց հետո՝ կենդանիների հետ շփման արդյունքում: Հիվանդության հարուցիչ վիրուսը մարդուն փոխանցվում է հիմնականում վայրի կենդանիներից, ինչպիսիք են՝ կրծողները և պրիմատները (շիմպանզե, գորիլա, օրանգուտան և այլն): Վարակումը կենդանիներից տեղի է ունենում կենդանիների (վարակված) արյան, կենսաբանական հեղուկների, ինչպես նաև վնասված մաշկի կամ լորձաթաղանթի հետ անմիջական շփման արդյունքում:

Ներկայումս արձանագրվում է վարակի փոխանցումը մարդուց մարդ: Փոխանցումը հնարավոր է շնչառական կաթիլների, կենսաբանական հեղուկների կամ ախտահարված հյուսվածքների հետ երկարատև սերտ շփման արդյունքում: Հնարավոր է նաև վարակի փոխանցումն օգտագործված սրբիչի և անկողնային պարագաների միջոցով:

Այսպիսով՝ վարակվելու ռիսկը բարձր է այն անձանց շրջանում, ովքեր ֆիզիկական սերտ շփում ունեն կապիկի ծաղիկի ախտաշաններ ունեցող անձանց կամ վարակված կենդանու հետ: Մարդիկ, ովքեր պատվաստվել են բնական ծաղիկ դեմ, որոշակի պաշտպանվածություն ունեն նաև կապիկի ծաղիկ վարակի դեմ:

Հիվանդությունը կարող է ավելի ծանր ընթանալ նորածինների, երեխաների և իմուն համակարգի խնդիրներ ունեցող անձանց շրջանում: Բուժաշխատողները նույնպես ավելի բարձր ռիսկի են ենթարկվում վիրուսների ավելի երկար ազդեցության պատճառով:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 9. Կապիկի ծաղկի դեպքերի արձանագրման շարժընթացը

ՀՀ-ում կապիկի ծաղկի ներքերման և տարածման կանխարգելման նպատակով իրականացվել են մի շարք միջոցառումներ.

- ✓ Բուժաշխատողների շրջանում բարձրացվել է իրազեկվածությունը Կապիկի ծաղկի հիվանդության տարածման ուղիների և կանխարգելման վերաբերյալ:
- ✓ Իրականացվել են ուսումնական դասընթացներ մաշկաբանների և վարակաբանների համար (շարունակական):
- ✓ Ակտիվացվել է համագործակցությունը Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնի հետ՝ սահմանի անցման կետերում հսկողությունը ուժեղացնելու և կասկածելի հիվանդների վաղ հայտնաբերման նպատակով:
- ✓ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի հետ համագործակցությամբ՝ արգելվել է էկզոտիկ կենդանիների ներկրումը Հայաստան:
- ✓ Ստեղծվել է աշխատանքային խումբ՝ ներկա փուլի համար (երբ դեպքեր չեն գրանցվում) կապիկի ծաղկի մասնահատուկ պատրաստվածության գործողությունների պլանի նախագիծ, ինչպես նաև համաձայն ԱՀԿ մոտեցումների՝ բժշկական կազմակերպությունների համար մեթոդական ուղեցույց մշակելու համար:
- ✓ Վերագնահատվել են լաբորատոր կարողությունները և ԱՆ հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղը բերվել է պատրաստվածության համապատասխան մակարդակի՝ վիրուսաբանական և հատուկ վտանգավոր վարակների լաբորատորիաների համար պատրաստվել է կենսանվտանգության ապահովման գործողությունների ստանդարտ ընթացակարգ (SOP) և իրականացվել է կենսանվտանգության հարցերով սեմինար:
- ✓ Արագ արձագանքման թիմերը (ԱԱԹ) հրահանգվել են կատարվող գործողությունների, ինչպես նաև արտահագուստը կրելու և դեպքերի համաճարակաբանական հետազոտության վերաբերյալ:
- ✓ Բնակչության շրջանում զգոնության բարձրացման նպատակով իրականացվել են իրազեկման աշխատանքներ՝ խորհուրդներ ճանապարհորդներին և այլն:  
Աշխատանքները շարունակվում են:



## ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԵՊԱՏԻՏՆԵՐ. ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հեպատիտը հիվանդություն է, որի ժամանակ ախտահարվում է լյարդը: Ալկոհոլը, թույները/տոքսիները, վարակիչ հիվանդությունների հարուցիչները կարող են առաջացնել հեպատիտ: Վիրուսային հեպատիտներ ավելի հաճախ առաջացնում են հեպատիտ Ա-ի, Բ-ի, Ց-ի, Դ-ի, Ե-ի վիրուսները: Աշխարհում առավել տարածված են հեպատիտներ Ա-ն, Բ-ն, Ց-ն:


Հեպատիտներ Բ-ն և Ց-ն վարակիչ հիվանդություններ են, որոնց հարուցիչները վիրուսային հեպատիտներ Բ-ի և Ց-ի վիրուսներն են:

Վարակի աղբյուրը հեպատիտ Բ-ով և Ց-ով հիվանդներն են, այդ թվում՝ գաղտնի շրջանում գտնվող անձինք: Հիմնական համաճարակաբանական նշանակություն ունեն առանց կլինիկական ախտանշանների սուր և քրոնիկ հիվանդները:

Վիրուսային հեպատիտ Բ-ի, Ց-ի հարուցիչ հիմնական փոխանցման գործոններն են արյունը, կենսաբանական հեղուկները, այդ թվում՝ սերմնահեղուկը, թուրքը, լեղին և այլն:

Վիրուսային հեպատիտներն առողջապահության գերակա խնդիրներից են և ունեն արտահայտված համաճարակային ներուժ, լայն տարածում և զգալի սոցիալ-տնտեսական բեռ:

Հայաստանի Հանրապետությունում 2021 թվականի ընթացքում արձանագրվել է վիրուսային հեպատիտի 1465 դեպք (հիվանդացության ցուցանիշը 100.000 բնակչի հաշվով՝ 49.3), որից՝ վիրուսային հեպատիտ Բ (սուր, քրոնիկ, ՀԲմ հակաձևակիր)՝ 494 (հիվանդացության ցուցանիշը 100.000 բնակչի հաշվով՝ 16.6), վիրուսային հեպատիտ Ց (սուր, քրոնիկ, հակա-ՀՑՎ-ակիր)՝ 967 (հիվանդացության ցուցանիշը 100.000 բնակչի հաշվով՝ 32.6), այլ (չճշտված, համակցված հեպատիտներ)՝ 4 (հիվանդացության ցուցանիշը 100.000 բնակչի հաշվով՝ 0.2): Արձանագրված 494 վիրուսային հեպատիտ Բ-ից՝ սուր հեպատիտ Բ՝ 5-ը (հիվանդացության ցուցանիշը 100.000 բնակչի հաշվով՝ 0.2), առաջնակի հայտնաբերված քրոնիկ հեպատիտ Բ՝ 16-ը (հիվանդացության ցուցանիշը 100.000 բնակչի հաշվով՝ 0.5), ՀԲմ հակաձևակիր՝ 473-ը (հիվանդացության ցուցանիշը 100.000 բնակչի հաշվով՝ 16.0): Արձանագրված 967 վիրուսային հեպատիտ Ց-ից՝ սուր հեպատիտ Ց՝ 9-ը (հիվանդացության ցուցանիշը 100.000 բնակչի հաշվով՝ 0.3), առաջնակի հայտնաբերված քրոնիկ հեպատիտ Ց՝ 49-ը (հիվանդացության ցուցանիշը 100.000 բնակչի հաշվով՝ 1.7), հակա-ՀՑՎ վիրուսակիր՝ 909-ը (հիվանդացության ցուցանիշը 100.000 բնակչի հաշվով՝ 30.6): Այլ՝ համակցված սուր վիրուսային հեպատիտ՝ 0, չճշտված վիրուսային հեպատիտ՝ 2-ը (հիվանդացության ցուցանիշը 100.000 բնակչի հաշվով՝ 0.1), քրոնիկ համակցված հեպատիտ՝ 2 (հիվանդացության ցուցանիշը 100.000 բնակչի հաշվով՝ 0.1):



Գծապատկեր 10. ՀՀ-ում 2016-2021 թթ. (ներառյալ) արձանագրված վիրուսային հեպատիտների հիվանդացության ցուցանիշները Երևան քաղաքում և մարզերում (հիվանդացության ցուցանիշը 100.000 բնակչի հաշվով)

Վիրուսային հեպատիտները, բացի բնական ճանապարհից (սեռական, մորից երեխային՝





հղիության և ծննդաբերության ժամանակ, կոնտակտային), փոխանցվում են նաև արհեստական ճանապարհով՝ բուժական և ախտորոշիչ միջամտությունների (արյան փոխներարկման, օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման, հեմոդիալիզի, ինչպես նաև աղտոտված բժշկական նշանակության իրերի օգտագործման) միջոցով: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում վիրուսային հեպատիտ Բ-ի և Ց-ի դեմ պայքարի և կանխարգելման ուղղությամբ աշխատանքները կատարվում են հիմնականում վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և ներհիվանդանոցային վարակների վերահսկման և կանխարգելման ընդհանուր մոտեցումների հիման վրա: Վիրուսային հեպատիտների կանխարգելումը և դրանց դեմ պայքարը բժշկական կազմակերպություններում իրականացվում է «Արտաընդերային վիրուսային հեպատիտների կանխարգելման և վերահսկման 2019-2023 թվականների ծրագրի» շրջանակներում: Ստեղծվել են իրավական հիմքեր բժշկական, ինչպես նաև ոչ բժշկական կազմակերպություններում բժշկական արտադրատեսակների մանրէազերծումը միջազգային մոտեցումներով իրականացնելու համար: Բացի այդ, հեպատիտների վաղ հայտնաբերման նպատակով հեպատիտ Բ-ի և հեպատիտ Ց-ի նկատմամբ լաբորատոր հետազոտություններ են իրականացվում պարտադիր հետազոտության ենթակա ռիսկի անձանց շրջանում:

Բնակչության բժշկահիգիենիկ կրթության, առողջ ապրելակերպի քարոզչության և վիրուսային հեպատիտների մասին տեղեկատվության մակարդակի բարձրացման նպատակով յուրաքանչյուր տարվա հուլիսի 28-ին նշվում է «Հեպատիտի դեմ պայքարի և իրազեկման համաշխարհային օրը»:


### **ՋՐԾԱՂԿԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Ջրծաղկը (Chickenpox) վիրուսային վարակիչ հիվանդություն է, որն ուղեկցվում է տենդով, մաշկի և լորձաթաղանթի վրա փոքր թափանցիկ պարունակությամբ լցված բշտիկների առաջացումով: Հարուցիչը varicella zoster վիրուսն է, պատկանում է հերպես վիրուսների խմբին: Վիրուսն ունի բարձր վարակելիություն (90-95%): Հիվանդների 50%-ը կազմում են 5-9 տարեկան երեխաները: Այս հիվանդությունը կարող է ի հայտ գալ նորածինների մոտ (մոր օրգանիզմում ցածր անընկալիչականության դեպքում):

Ջրծաղկին բնորոշ է սեզոնայնությունը, առավել շատ դեպքեր արձանագրվում են գարուն-ձմեռ ժամանակահատվածում, և պարբերականությունը՝ յուրաքանչյուր 8-10 տարին մեկ հնարավոր է դեպքերի զգալի աճ:

2022 թվականի վերջին 4 ամսվա ընթացքում արձանագրվել է ջրծաղկի 6207 դեպք (հիվանդացության ցուցանիշը 209,5), 0-18 տարեկանների շրջանում՝ 5604 դեպք (հիվանդացության ցուցանիշը 763,4): 2021 թվականի միևնույն ժամանակահատվածի համեմատ հիվանդացությունը (26,2) բարձր է՝ 7,9 անգամ, իսկ 2020 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 1,1 անգամ: Արձանագրված ջրծաղկի դեպքերի 90,2%-ը (5604 դեպք) արձանագրվել է 0-18 տարեկանների շրջանում, 33,6%-ը՝ (2090 դեպք)՝ 3-6 տարեկանների շրջանում: Հիվանդացության դեպքերի 80%-ը արձանագրվել է կազմակերպ հաստատություններում, որտեղ առկա են պայմաններ վիրուսի տարածման համար: 2022 թվականի վերջին 4 ամսվա ընթացքում զգալի աճ է նկատվել Երևան քաղաքում և Լոռու ու Սյունիքի մարզերում:

Համեմատելով 2017-2022թթ. հիվանդացության ցուցանիշներն ըստ ամիսների կունենանք հետևյալ պատկերը:



Գծապատկեր 11. 2017-2022թթ. ջրծաղիկով հիվանդացությունն ըստ ամիսների (100.0 բնակչի հաշվարկով)

2022 թվականի վերջին 4 ամսվա ընթացքում արձանագրված հիվանդացության ցուցանիշը 2017-2019թթ. միևնույն ժամանակահատվածի համեմատ բարձր է՝ 2019թ. համեմատ՝ 2,1 անգամ, իսկ 2018 և 2019 թթ. համեմատ՝ 1,3 անգամ, և հիվանդացության հետզհետե աճը պայմանավորված է ջրծաղիկին բնորոշ սեզոնայնությամբ: 2021թ. միևնույն ժամանակահատվածի համեմատ հիվանդացությունը (26,2) բարձր է՝ 7,9 անգամ, իսկ 2020թ. նույն ժամանակահատվածի համեմատ՝ 1,1 անգամ:

2020 և 2021 թվականների համեմատ հիվանդացության զգալի աճը պայմանավորված է երկրում գործող սահմանափակումներով, ինչպես նաև այն հանգամանքով, որ կազմակերպ հաստատություններում դասերն ընթացել են հիմնականում հեռավար եղանակով, շփումները նվազել են, հաստատություն հաճախելիս պահպանվել են հակահամաճարակային կանոնները, ինչն էլ նպաստել է ջրծաղիկի դեպքերի զգալի նվազմանը:

## COVID-19 SITUATION IN THE REPUBLIC OF ARMENIA AS OF JUNE 6

The COVID-19 epidemic situation in the world remains tense. As of June 6 (11:32 pm CEST) 535,506,558 confirmed cases of the disease were registered all over the world, of which 298862 were new cases and 6,320,616 (1.2%) deaths<sup>5</sup> reported. Cases have been reported in 223 countries, including the United States, India, Brazil, the Russian Federation, France, the United Kingdom, Turkey, Argentina, Colombia, Spain, Italy, Iran and others on the list<sup>6</sup>.

Over the past week, the most cases were registered in the following countries: USA, Iran, India, Brazil, Indonesia, United Kingdom, Turkey, Russian Federation, France, Thailand, Malaysia, Mexico, Iran, etc.

### Situation by WHO Region

Europe	221 373 828 confirmed
Americas	157 725 452 confirmed
Western Pacific	60 771 271 confirmed
South-East Asia	58 157 405 confirmed
Eastern Mediterranean	21 780 549 confirmed
Africa	9 007 048 confirmed

Source: World Health Organization  
Data may be incomplete for the current day or week.




Figure 1: Proportion of cases by WHO regions

As of June 6, 2022, 423,006 cases were registered in the Republic of Armenia (14295.7 per 100,000 population), of which 67 (0.01%) received treatment, 412661 (97.5%) recovered, 8629 death cases (291.5 per 100,000 population) were registered, the mortality rate was 2%.

During the last 14 days, 67 cases of the disease were registered (2.3 cases per 100,000 population), which increased by 56% compared to the previous period (43 cases, 1.5 cases per 100,000 population).

The share of positive test results in the last 14 days was 0.3%, while in the previous 14 days - 0.2%.

During the last 7 days, 43 cases of the disease were registered, which increased by 79% compared to the same previous period (24 cases).

5 <https://covid19.who.int/>


6 <https://www.who.int/emergencies/diseases/novel-coronavirus-2019>



The share of positive test results in the last 7 days was 0.4%, while last week it was 0.2%.

TABLE 1: COVID-19 cases by marzes

Marz	Previous 14 days 5/9/2022 - 5/22/2022		last 14 days 5/23/2022 - 6/5/2022	
	Number of positive cases	Relative index per 100,000 population	Number of positive cases	Relative index per 100,000 population
Aragatsotn	3	2.4	0	0.0
Ararat	4	1.6	9	3.5
Armavir	1	0.4	3	1.1
Gegharkunik	3	1.3	1	0.4
Yerevan	27	2.5	41	3.8
Lori	1	0.5	4	1.8
Kotayk	2	0.8	4	1.6
Shirak	1	0.4	3	1.3
Syunik	0	0.0	3	2.2
Vayots Dzor	0	0.0	0	0.0
Tavush	1	0.8	2	1.6
<b>RA</b>	<b>43</b>	<b>1.5</b>	<b>67</b>	<b>2.3</b>



Map 1: COVID-19 morbidity rate by regions, for the period of 23.05-05.06.2022



Over the last 14 days, 2.3 cases of the disease were registered per 100,000 population, and the share of positive test results in the last 14 days was 0.3%, which by EU standards is considered a “green zone”<sup>7</sup>. Two weeks ago, the above figures were 1.5 cases per 100,000 population, respectively. The share of positive test results was 0.2%.

FIGURE 2. Risk zones according to EU standards



## EPIDEMIOLOGICAL CONTROL OF CASES WITH PCR DOUBLE POSITIVE RESULTS FOR COVID-19 IN RA


The COVID-19 pandemic is one of the biggest challenges of the 21st century. It has already infected 530 million people, causing the death of more than 6.3 million people. Taking into account the variability of the infectious agent, an epidemiological study of all COVID-19 PCR tests that were positive in the same subjects more than once was carried out in the Republic of Armenia.

The data of all subjects with 2 and more positive COVID-19 PCR test results was extracted from the “ARMED” electronic system. Cases where the time interval between 2 positive results was less than 90 days were excluded from the list. As of June 1<sup>st</sup>, 2022, 19,347 such cases were registered in Armenia.

The majority of cases were among women (11816 persons, 61.1%) with the mean age of  $45.24 \pm 0.11$  years. Cases with multiple positive test results were mainly registered in the age group of 20-69 years, especially in the age group of 30-39 years.

Out of a total of 19347 cases, 19049 cases were registered as re-infected, 296 cases as re-infected second time, and 2 cases as re-infected the third time.

Figure 3. The period of recording of the first case



It can be seen from Figure 3 that the majority of patients are those who became ill during the first three waves, due to a change in strain.

<sup>7</sup> <https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2021/06/14/covid-19-council-updates-recommendation-on-free-movement-restrictions/>

← →

## COVID-19 VACCINATION IN REPUBLIC OF ARMENIA: STATISTICAL DATA

As of June 6, 2022, more than 11.83 billion doses of vaccine have been administered worldwide. About 65.7% of the world's population has been vaccinated against COVID-19. 5.52 million doses of vaccine are administered daily worldwide. The highest prevalence of COVID-19 vaccination in the general population was recorded in the United Arab Emirates - 97.11%, Singapore - 91.50%, Chile - 91.28%, Cuba - 88.06%.<sup>8</sup>

As of June 6, 2022, 2204539 vaccinations have been carried out. The first dose: 1135623 vaccines, of which 219946 doses are “AstraZeneka”, 49742 doses - “CoronaVac”, 173710 doses - “Sputnik-V”, 486196 doses - “Sinopharm”, 183490 doses - “Moderna”, 310 doses - “Covishield”, 6761 doses - “Sputnik Light”, 15457 doses - “Pfizer”, 11 doses are “Janssen” vaccines. The second dose: 1012939 vaccines, including “AstraZeneka” - 189389, “CoronaVac” - 47052, “Sputnik-V” - 163535, “Sinopharm” - 437261, “Moderna” - 161592, “Covishield” - 125, “Pfizer” - 13985. Booster dose: 55977 vaccines, including “AstraZeneka” - 6729, “CoronaVac” - 464, “Sputnik-V” 1608, “Sinopharm” - 4719, “Moderna” - 20848, “Covishield” - 0, “Sputnik Light” - 7304, “Pfizer” - 14305.




Figure 4. COVID-19 vaccination by doses as of 06.06.2022




Figure 5: COVID-19 vaccination by vaccines as of 06.06.2022

The performance index of the first dose of COVID-19 vaccines in the country for 18 years and older population varies from 38.3% to 57.4%, the national average rate is 50.3%. The lowest rate was registered in Tavush marz - 38.3%, in Syunik marz - 42.1%. The highest index was registered in Ararat marz - 57.4%, in Aragatsotn marz - 54.7% and in Yerevan - 53.7%.

TABLE 2: Vaccination coverage by marzes and Yerevan, 06.06.2022

Marz/ Yerevan	1 <sup>st</sup> dose performance, % (18-years and above population)	2 <sup>nd</sup> dose performance, % (18-years and above population)	Booster dose performance, % (18-years and above population)	1 <sup>st</sup> dose performance, % (total population)	2 <sup>nd</sup> dose performance, % (total population)	Booster dose, % (total population)
Aragatsotn	54.7	47.5	2.9	40.9	35.5	2.2
Ararat	57.4	52.6	4.2	43.3	39.6	3.2
Armavir	49.2	44.9	2.7	37.6	34.3	2.1
Gegharkunik	47.5	41.3	1.8	35.9	31.3	1.4
Lori	45.6	41.4	2.0	34.1	31.0	1.5
Kotayk	49.3	45.3	2.0	36.9	33.9	1.5
Shirak	45.0	40.2	2.2	33.8	30.2	1.7
Syunik	42.1	36.1	1.0	33.2	28.5	0.8
Vayots Dzor	49.0	44.3	1.2	37.9	34.2	0.9
Tavush	38.3	34.5	1.2	29.4	26.5	0.9
Yerevan	53.7	47.4	2.8	41.3	36.4	2.1
<b>RA</b>	<b>50.3</b>	<b>44.9</b>	<b>2.5</b>	<b>38.3</b>	<b>34.2</b>	<b>1.9</b>

COVID-19 vaccination coverage by gender does not have a clear epidemiological pattern, and the picture is as follows: male involvement in the 1<sup>st</sup> dose of COVID vaccination is 58.1%, female involvement is 42.9%, male involvement in the 2<sup>nd</sup> dose of COVID vaccination is 52.9%, female involvement is 37.9%, male involvement in booster dose vaccination is 2.9%, female involvement is 2.2%.




Figure 6: COVID-19 vaccination coverage by gender

COVID-19 vaccination coverage by age group is as follows: the lowest coverage is in the age group 65-years and older, in particular, first-dose vaccination coverage is 43.4%, second-dose vaccination coverage is 40.0%, booster dose vaccination coverage is 3.0 %:






Figure 7: COVID-19 vaccination coverage by age groups


## COVID-19 vaccination coverage by gender and age group



Female



Male



	12-17 y.o.	18-34 y.o.	35-64 y.o.	65+ y.o.
	1.4%	46.5%	53.6%	43.4%
	1.1%	40%	48.9%	40%
	0%	1.9%	2.6%	3%

06. 06. 2022



The lowest rate of coverage among 65-years old population for the second dose of COVID-19 vaccine was registered in Syunik marz - 28.5%, Tavush marz - 32.3%, Shirak marz - 39.3%. The highest index was registered in Armavir marz - 50.3%, in Aragatsotn marz - 50.0%, in Ararat marz - 48.4%.

TABLE 3.

Marz / Yerevan	65 years and older	1 <sup>st</sup> dose	%	2 <sup>nd</sup> dose	%	Booster	%
Aragatsotn	12766	7447	58.3	6388	50.0	512	4.0
Ararat	27039	14342	53.0	13084	48.4	1528	5.7
Armavir	26414	14422	54.6	13277	50.3	1052	4.0
Gegharkunik	22804	11649	51.1	10314	45.2	573	2.5
Lori	27995	10554	37.7	9812	35.0	607	2.2
Kotayk	26512	12259	46.2	11380	42.9	696	2.6
Shirak	26656	11365	42.6	10474	39.3	846	3.2
Syunik	18549	6050	32.6	5285	28.5	217	1.2
Vayots Dzor	6181	2679	43.3	2498	40.4	105	1.7
Tavush	17192	6140	35.7	5548	32.3	218	1.3
Yerevan	160827	65031	40.4	61086	38.0	4993	3.1
<b>RA</b>	<b>372935</b>	<b>161938</b>	<b>43.4</b>	<b>149146</b>	<b>40.0</b>	<b>11347</b>	<b>3.0</b>

\*Low coverage rates are highlighted .

### COVID-19 VACCINATION EFFECTIVENESS

The proportion of vaccinated persons among the generally confirmed cases of COVID-19 in the Republic of Armenia, according to the dosage, is as follows:

As of June 6, 2022, out of 423,006 confirmed cases of COVID-19 in the Republic of Armenia, 15438 people had got the 1<sup>st</sup> dose of vaccine, which makes 3.6%, 36586 people – the 2<sup>nd</sup> dose, 34418 people – in 14 days after getting the 2<sup>nd</sup> dose, which makes 8.1%, 429 people, which makes 0.1%, were vaccinated with booster dose.

Below is the proportion of COVID-19 cases reported in 8.1% of individuals after vaccination by each vaccine:

